



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

2019 թվականի հուլիսի 8-ի N 297-Ա  
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 18-ի N 732-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով և 28-րդ կետով, հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները՝ համաձայն թվով 6 հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալներին, վարչությունների և բաժնի պետերին՝ յուրաքանչյուրն իր մասով ապահովել կանոնադրություններում նախատեսված գործառույթների պատշաճ իրականացումը, խնդիրների ժամանակին և արդյունավետ լուծումը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ԱՐՄԵՆ ԿՈՏՈՒՅԱՆ